ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սպիտակի 1

№ 4130-Ա « 10 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի Հ.2156-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 08.10.2025թ. հ.20-Էլ-31444 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Մանվել Բարեղամյանի՝ ի դեմս ներկայացուցչի 26.11.2024թ. հ.Դ-150039-24 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2015 թվականի հուլիսի 10-ի «Երևանի Դավթաշենի 1-ին փողոցի հ.8 բնակելի տան և հողամասի նկատմամբ Արուսյակ Սարգսի Բարեղամյանի իրավունքները վերականգնելու, 470.97քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.2156-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով, հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա, Երևան քաղաքի Դավթաշենի 1-ին փողոցի հ.8 հասցեում գտնվող 539.57 քառ.մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:».

2) Որոշման նախաբանից հանել «իսկ 51.54քմ մակերեսով հողամասը չի կարող փոխանցվել սեփականության իրավունքով, քանի որ գտնվում է կառուցապատման գծից դուրս» բառերը.

3) Որոշման նախաբանում՝ «822.31» թիվը փոխարինել «539.57» թվով, 1-ին կետում՝ «770.97» թիվը փոխարինել «539.57» թվով, իսկ վերնագրում և 2-րդ կետում՝ «470.97» թիվը փոխարինել «239.57» թվով.

4) Որոշման նախաբանում «Արուսյակ Սարգսի Բարեղամյանի (ծնված 14.09.1937թ.)» բառերը փոխարինել «Մանվել Ռաթևոսի Բարեղամյանի (ծնված 20.01.1968թ.) բառերով, իսկ վերնագրում, նախաբանում, 1-ին, 2-րդ, 3-րդ կետերում՝ «Արուսյակ Սարգսի Բարեղամյանի» բառերը փոխարինել «Մանվել Ռաթևոսի Բարեղամյանի» բառերով.

5) Որոշման 3-րդ կետում՝ «քաղաքապետի խորհրդական Հ.Մուրադյանին» բառերը փոխարինել «քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ